# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս ժողովածուում վետեղված են մարքս-լենինյան էսթետիկայի, ինչպես նաև էսթետիկայի պատմության մի շարք հարցերի նվիրված հոդվածներ:

Ժողովածուի հոդվածների մի մասը շոշափում է հարցեր, որոնք սովետական էսթետիկական գրականության մեջ դեռ չեն ստացել իրենց լուծումը և բանավիճային բնույթ ունեն: Եվ միանգամայն հասկանալի է, որ առանձին դրույթներ և հարցադրումներ, հանդիսանալով գրքի հեղինակների տեսակետների արտահայտություն, բնավ չեն սպառում քննարկվող հարցերը:

Համենայն դեպս, այդ հոդվածները ընթերցողներին ոչ միայն ծանոթացնում են մեր էսթետիկական գրականության մեջ գոյություն ունեցող տարակարծություններին, այլև, առաջադրելով ինքնուրույն տեսակետ, իրենց թեև համեստ, բայց որոշակի լուման են ներդնում համապատասխան պրոբլեմների մշակման մեջ:

«Էսթետիկայի հարցեր» ժողովածուն նախատեսվում է ընթերցողների լայն շրջանի՝ ուսանողների, ժողովրդական համալսարանների ունկնդիրների, արվեստի աշխատողների և ընդհանրապես էսթետիկայի հարցերով հետաքրքրվողների համար:

Ժողովածուն պատրաստված է Հայկական ՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի էսթետիկայի խմբի կողմից: Գրքին մասնակցում են նաև Երևանի բուհերի դասախոսներ: